

Վանիկ Վիրաբյան
ԷՋԵՐ ԼԵՎՈՆ ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆԻ ՀԵՏԱԽՈՒՋԱԿԱՆ
ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Հետախույզ, բանակ, մտավորական, հանրապետություն, ՀՀ, օրագիր, պետություն, հետախուզություն, հակահետախուզություն, պետություն, տեղեկություն, կերպար, սպա, կենսագրություն, դիվանագիտական հավատարմատար, ծառայություն, հակառակորդ



Լևոն Գևորգի Բաշինջաղյանը /կեղծանունը՝ Լևոն Բաշ/ հանրաճանաչ հայ նկարիչ և բանաստեղծ Գևորգ Ջաքարի Բաշինջաղյանի չորս որդիներից ավագ որդին էր, որի մասին խորհրդային հայտնի հետախույզ Կարեն Արմենի Խաչատուրովը չափազանց մեծ դրվատանքով է արտահայտվում¹: Նա ծնվել է Թիֆլիսում 1893 թ., վախճանվել 1948 թվականին: Դատելով ժամանակակիցների մի շարք արժանահիշատակ վկայություններից Լևոն Բաշինջաղյանը ևս տաղանդավոր նկարիչ էր ու ինքնատիպ բանաստեղծ: Պահպանվել է նրա շատ հետաքրքիր և տպավորություններով լի «Կովկասյան

օրագիրը», որը վերաբերում է Առաջին աշխարհամարտի 1918 թ. դեպքերին ու իրադարձություններին²:

Խորհրդային կարգերի հաստատման և տիրապետության ժամանակ նա անցնում է կյանքի մեծ բովով՝ դառնալով ականավոր կովկասագետ և արևելագետ-լեզվաբան, պրոֆեսոր, ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Լեզվի և մտածողության ինստիտուտի գիտքարտուղար: Լ. Բաշինջաղյանը Ն. Յ. Մառի մերձակա կողմնակիցներից էր:

Լևոն Բաշինջաղյանի որպես հասուն մարդու առաջին իսկ քայլերը եղել են հստակ և անպաճույճ: Դեռևս 20-րդ դարասկզբին՝ 1903-1912 թթ., նա ավարտել է Թիֆլիսի 3-րդ գիմնազիան, իսկ այնուհետև՝ 1913-1916 թթ.՝ դարձել Պետերբուրգի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետի ուսանող: Այնուհետև՝ Պավլովյան յունկերական ուսումնարանի սան: Առաջին աշխարհամարտը անակնկալներով, ու նոր փորձություններով էջ բացեց նրա ճակատագրի ելևեղումների մեջ:

¹ Տե՛ս Սարգսյան Ա.Ե., Հետախուզություն և հակահետախուզություն. հայկական հետք (կենսագրական ակնարկներ հետախույզների և հակահետախույզների մասին), Եր., «Ամարաս», 2005, էջ 194-195:

² “ ”, 1994, 8 .

Լևոն Բաշինջաղյանը զորակոչվում է ռուսական ցարական բանակ: Իսկ արդեն 1917 թ. փետրվարից դառնում է ռուսական Կովկասյան բանակի մարտական սպա:

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո Լևոն Բաշինջաղյանը հայկական պետության անվտանգության համակարգի՝ հետախուզական բաժնի կարկառուն դեմքերից է: Պրոֆեսոր Կարեն Խաչատուրովը ջերմությամբ անդրադառնալով նրա կերպարին և հիշատակելով «Կովկասյան ձեռագիր» օրագիրը, նշում է այնտեղ հետաքրքիր փաստեր 1918 թ. գարնանից մինչև 1920 թ. հունվարը տեղի ունեցած պատմաքաղաքական իրադարձությունների մասին՝ Առաջին հանրապետության հռչակումից մինչև ՀՀ-ի դե-ֆակտո ճանաչումը դաշնակիցների կողմից: Եվ ինչպես ակնհայտ է դառնում ՀՀ զինվորական նախարարի 1918 թ. օգոստոսի 26-ի հրամանագրից, Հայաստանի Հանրապետության հակահետախուզության պետ Բաշինջաղյանը վերագործուղվել է Գլխավոր շտաբ՝ հատուկ հանձնարարությունների համար¹:

ՀՀ-ի հռչակման պահից պոդպորուչիկ Լևոն Գեորգիի Բաշինջաղյանը Գլխավոր շտաբի հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի կազմում էր, նրա տարբեր ենթաճյուղերում: Եվ եթե նա 1918 -1919 թթ. հանձնարարությունների գծով սպա էր, ապա 1920 թվականի սկզբին՝ ՀՀ Ձինվորական դատարանի քարտուղարի օգնական, իսկ այնուհետև՝ հետախուզության ռեզիդենտ Վրաստանում, որտեղ հետախուզական ծառայությունը փաստացի ղեկավարում էր գեներալ-մայոր Յովսեփ Արտեմի Քիչմիշյանը², որը համակողմանի պատրաստված անձնավորություն էր և կիրթ, տիրապետում էր ֆրանսերենի և մի շարք լեզուների, որը կարևոր էր այլ երկրների ռազմաքաղաքական ներկայացուցչությունների հետ հարաբերվելու տեսանկյունից:

1920 թ. ապրիլի 5-ի N 108 զեկուցագրում Հ.Քիչմիշյանը հայտնում էր, որ զինվորական գործի գլուխ կանգնած անձանց հերթափոխության խնդիրը իրեն մղում է անհապաղ զեկուցել, որ զինվորական գործակալի վրա դրված գլխավոր խնդիրներից մեկը հանդիսանում է հետախուզության կազմակերպումը՝ ընդգծելով, որ այդ նպատակով իր կողմից գրվել է մանրամասն հրահանգ, որն այնուհետև հաստատվել է զինվորական նախարարի կողմից: Սակայն Քիչմիշյանը դժգոհում էր, որ ոչ նյութական միջոցները, ոչ էլ այդ բնագավառում իրավասու անձինք իր մոտ չեն ուղարկվել, եթե նկատի չառնվի պոդպորուչիկ Բաշինջաղյանի գործուղումը: Ի դեպ, դիվանագիտական հավատարմատարին կից զինվորական վարչության ղեկավարի կարգադրության տակ գտնվող պոդպորուչիկ Լևոն Գեորգիի Բաշինջաղյանը որոշ ժամանակ անց նշանակվում է Բորչալուի գավառի «Չեզոք» գոտու ղեկավարությունը իրականացնող ամերիկյան սպային կից կապերի գծով սպա, ինչի մասին հաղորդվում էր ՀՀ զինվորական գերատեսչության 1920 թ. նոյեմբերի 13-ի հրամանում (N 467)

¹ Տես ՀԱԱ, Ֆ.Պ - 204, ց.1, գ.42, թ. 52-55:

² Տես ՀԱԱ, Ֆ.Պ - 204, ց.1, գ.131, թ. 24, Ֆ.Պ- 276, ց.1, գ. 75, թ. 35, գ. 26, թ. 203:

հիմք ընդունելով զինվորական կցորդի N 284 զեկուցագիրը¹: Քիչմիշյանը, սակայն, հայտնում էր, որ ժամանելով նոյեմբեր-հունվարին՝ պողպորուչիկ Բաշինջաղյանը հեռացել է անհայտ հասցեով՝ ոչ մեկի տեղյակ չպահելով: Վերոհիշյալ հանգամանքը հաստատում է նաև հենց Քիչմիշյանը, Բաշինջաղյանի վարքագծից եզրակացնում էր, որ վերջինս գործուղվել է ինքնուրույն գործառնություններով: Այդ մասին գեներալ Քիչմիշյանը կարող էր տեղյակ չլինել, քանզի Լ.Գ. Բաշինջաղյանը Թիֆլիս էր գործուղվել դեռևս նախկին դիվանագիտական հավատարմատար Լ.Գ. Եվանգուլյանի ժամանակ: Դրան մենք տեղեկանում ենք Սաշա (Ալեքսանդր) Խատիսյանի 1919 թ. հուլիսի 14-ի հեռագրից՝ ուղղված Լեոյին (Լեվոնին՝ Լ. Եվանգուլյանին), որում խնդրվում էր հիշատակվող գրությամբ ներկայացող Լ. Գ. Բաշինջաղյանին լիովին վստահել մեր քաղաքականության բոլոր գաղտնիքներում՝ ընդգծելով, որ նա Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքից է: Ա. Խատիսյանը սույն գրությամբ խնդրում էր Լ. Բաշինջաղյանին հնարավորություն տալ հարաբերությունների մեջ մտնել բոլոր այն անձանց հետ, որոնց ինքը նպատակահարմար կգտնի՝ նրան հետաքրքրող ցանկացած հարցի վերաբերյալ²: Հենց այդ հանգամանքն էլ առաջ էր բերել գեներալ Հ. Քիչմիշյանի դժգոհությունը, որը ցանկանում էր ըմբռնել իրավիճակի բոլոր նրբերանգները, տնօրինել կադրերը: Այդպես շարունակվում է նրա գործունեությունը:

Լ. Բաշինջաղյանի հետախուզական-զինվորական կենսագրությունում բեկունձային են դառնում 1920 թ. նոյեմբեր-դեկտեմբերին տեղի ունեցած իրադարձությունները, որոնք հանգեցնում են խորհրդային կարգերի հաստատմանը: Այդ ժամանակաշրջանը բարդ էր և խճճված, ինչը անդրադառնում է Լ. Բաշինջաղյանի կյանքի ու հետախուզական կենսագրության հետագա ընթացքի վրա:

1920 թ. դեկտեմբերից մինչև 1921 թ. փետրվարը եղել է Երևանում Լուսժողկոմի արվեստի բաժնի քարտուղար: Սակայն մինչ ՀԽՍՀ Լուսժողկոմի տրամադրության տակ անցնելը հայտնվում է խորհրդային իշխանությունների կողմից ձերբակալվածների ցուցակում, որպես նախկին դաշնակցական կառավարության ռազմական «կոնտրռազվեդկայի» պետերից մեկը, որն անբարեհույս էր համարվում՝ իր սկզբունքային, ինքնատիպ և առողջ դիրքորոշումով ՀՀ կառավարության ռազմավարության հիմնախնդիրներում³: Այս գործի ընթացքին վճռական և համարձակ միջամտություն է ցուցաբերում ՀՀ լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանը, որը 1921 թ. հունվարի 26-ի գրությամբ՝ ուղղված Հայիեղկոմի նախագահ Ս. Կասյանին, խնդրում էր Լուսժողկոմի արվեստի բաժնի քարտուղար, նախկին սպա Լևոն Բաշինջաղյանին իբրև անփոխարինելի և անհրաժեշտ աշխատակցի դուրս բերել Ռուսաստան ուղարկվող նախկին ապաների ցուցակից և իր երաշխավորությամբ թողնել իր տրամադրության տակ⁴:

¹ Նույն տեղում, Ֆ.Պ - 204, ց.1, գ.132, թ.185, գ.131, թ. 24:

² Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ – 204, ց.1, գ. 116, թ. 69:

³ Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 113, ց. 3, գ. 3, թ. 40:

⁴ Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 113, ց. 3, գ. 3, թ. 53:

1921-1923 թթ. Լ. Բաշինջաղյանը թղթակցել է Լուսժողկոմի « » ամսագրին, հանդիսացել նրա առավել գործունյա թղթակիցներից մեկը:

1921 թ. մայիսից մինչև 1922 թ. նոյեմբերը աշխատել է Թավրիզի գեղարվեստական ստուդիայում որպես ռուսաց լեզվի դասախոս:

1922 թ. դեկտեմբերից Լ. Բաշինջաղյանը Թիֆլիսում աշխատելով Վրաստանի Լուսժողկոմատում՝ զբաղվել է գրական գործունեությամբ: 1923 թ. Պետրոգրադում ավարտել է Լենինգրադի պետական համալսարանի հասարակագիտական գիտությունների ֆակուլտետի հաբեթական լեզվաբանության բաժանմունքը (հայագիտություն և ընդհանուր լեզվաբանություն, 1923-1927 թթ.):

1926 թ. նա դառնում է ԽՍՀՄ-ի բնակչության ցեղային կազմի ուսումնասիրման գծով հանձնաժողովի պրակտիկանտ: 1929 թ. մարտին տեղափոխվում է ԳԱ Հաբեթական ինստիտուտ և հաջողությամբ գլխավորում արտադրական տերմինների խումբը, իսկ արդեն 1929-1937 թթ. ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Հաբեթական լեզվի ու մտածողության ինստիտուտը: Այդ նպատակի իրագործման համար մեկնում է Անդրկովկաս լեզվագիտական բնույթի նյութ հավաքելու և դասախոսություններ կարդալու համար: Իր իսկ սաների վկայությամբ, մասնավորապես Տ. Ա. Շումովսկու հաստատումով, Լևոն Բաշինջաղյանը եղել է շատ հարգված ու հեղինակություն վայելող դասախոս, փայլուն հռետոր, որին համեմատել են նույնիսկ նշանավոր պատմաբան Տառլեի հետ, որը տիրապետում էր հղկված և տարողունակ դարձվածքների, որոնք դասդասվում էին մի հրաշալի և ավարտուն ամբողջության մեջ¹: Ա. Կրասնով-Լիտվինը ևս իր «Հիշողություններ» գրքում Լ. Բաշինջաղյանի մասին գրում է որպես փայլուն «երուդիտի», որը եղանակ է ստեղծել լեզվաբանության մեջ²: Լևոն Բաշինջաղյանի մասին ջերմությամբ է արտահայտվում հայտնի խորհրդային դերասան, գրող Գեորգի Ստեփանի ժժեմովը³:

Այդ ընթացքում նա հանդիսացել է նաև Ղազախստանի պատմահնագիտական ինստիտուտի արտահաստիքաին թղթակից: Բաշինջաղյանը ստանում է բանասիրական գիտությունների թեկնածուի, իսկ արդեն 1934 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 1929-1936 թթ. որպես պրոֆեսոր դասավանդել է Լենինգրադի պետական համալսարանում, իսկ 1930 թ. սեպտեմբերից նաև գրականության և պատմության ինստիտուտի դոցենտ էր:

1935 թ. մայիսին Լևոն Բաշինջաղյանը ժամանակավորապես ազատվում է Հաբեթական ինստիտուտի գիտքարտուղարի պարտականություններից (մինչև 1936 թ.)՝ «Խոսքի պալեոնտոլոգիայի փորձ բալկարա-կարաչևյան լեքսիկայի հիման վրա» դոկտորական ատենախոսության վրա աշխատելու համար:

1 Տե՛ս : , , 1975. . 296:

2 Տե՛ս - , , 197. . 319:

3 Տե՛ս , c / , 1997. . 203:

1937 թ. Հաբեթական ինստիտուտի պլանի համաձայն աշխատել է «Կրճատված բառեր (բառակազմության եղանակների հարցի շուրջ)» աշխատասիրության վրա:

1937 թ. դեկտեմբերից դառնում է ԽՍՀՄ Լեզվի և ժողովուրդների գրերի կենտրոնական ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի դիրեկտոր, իսկ արդեն 1937 թ. նոյեմբերի 20-ից սեփական դիմումի համաձայն ազատվում է այդ պաշտոնից: Լևոն Բաշինջադյանը եղել է Ն. Մառի առավել եռանդուն համախոհներից մեկը, որոնց թվում էին նաև Վ. Բ. Ապտեկարը և Ս. Ն. Բիկովսկին:

Սակայն Լևոն Բաշինջադյանի կյանքը կարճատև է լինում: Ինչպես սրընթաց և փոթորկուն է լինում նրա վերելքը, նույնչափ էլ անկումը: Շուտով նա դառնում է ստալինյան համակարգի ամենդ զոհերից մեկը: Ըստ մի վարկածի, 1938 թ. նա անհիմն ձերբակալվում է և գնդակահարվում 1938 թ. հոկտեմբերի 11-ին: Մեկ այլ վարկածի համաձայն, Լևոն Բաշինջադյանը ամենևին էլ չի գնդակահարվել, այլ զոհվել է 1948 թ. ԳՈՒԼԱԳ-ում, մագադանյան ճամբարներից մեկում, ինչը դեռ պետք է ճշգրտել: Ահա այսպիսի ավարտ է ունենում Առաջին Հանրապետության հետախուզական ծառայության ակունքներում կանգնած լավագույն հետախույզներից մեկի՝ Լևոն Բաշինջադյանի բազմաբեղուն կյանքը, մարդ, որը խորհրդային կարգերի ժամանակ դառնում է խորհրդային լեզվաբանության, հաբեթագիտության խոշորագույն դեմքերից մեկը, որի մասին ջերմ դրվատանքով են արտահայտվել ժամանակակիցները:

Հայկական հետախուզական ծառայության ձևավորման և գործունեության պատմաքննության առումով հետաքրքրություն է ներկայացնում ՀՀ բարձրագույն սպայակազմի և հետախուզական ծառայության ներկայացուցիչ, նրա կառույցների ձևավորման գործուն մասնակից Լևոն Բաշինջադյանի «»-ը, որում առկա պատմափաստերը առնչվում են Հայաստանի Հանրապետության և նրա հետախուզական ծառայության պատմության հետ: Հոդվածի նպատակն է մասամբ լրացնել հայ պատմագիտության մեջ գոյություն ունեցող զգալի բացը՝ ակնկալելով հայկական հետախուզության պատմության ևս մեկ «սպիտակ էջի» բացահայտումը և ներկայացումը հայ ընթերցողի, պատմաբանների և մասնավորապես հայկական հետախուզության պատմությանը զբաղվող մասնագետների ուշադրությանը: Փաստաթուղթը միաժամանակ վկայում է, որ Հայաստանի Հանրապետությունը որպես կայացման ձգտող պետություն այդ դժվարին և սովյալ տարիներին անգամ զգալի ջանքեր է գործադրել ունենալու ամեն մի պետության համար անհրաժեշտ «աչքի ու ականջի» դեր կատարող այդ մարմինները՝ հետախուզական ծառայությունները: Ստորև բերվող փաստաթուղթը հնարավորություն է տալիս էլ ավելի ամբողջական և ավարտուն դարձնելու ՀՀ հետախուզական ծառայության գործունեությունը 1918-1920 թթ., որ, կարծում ենք, կհետաքրքրի գիտական-մտավորական շրջանակներին, ռազմական պատմաբաններին և հետախուզագետներին:

ВОСПОМИНАНИЕ О БУДУЩЕМ

В питерской публичной библиотеке обнаружен рукописный дневник брата моей матери Леона Георгиевича Башинджагяна. Он, боевой офицер русской Кавказской армии, а после провозглашения независимости Армении - сотрудник разведслужбы ее национальной армии, свидетельствует на протяжении двух лет о ситуации в Закавказье вслед за октябрьским переворотом: войне с Турцией - союзницей Германии, межнациональных конфликтах, положении армянских беженцев, судьбе российского офицерства. После октябрьского переворота и ухода с турецкого фронта российских войск их место заняли армянские воинские формирования. Дневник написан на русском языке, отдельные фразы – на армянском и французском. Хроника перемежается лирическими стихами. Сохранены авторская орфография и пунктуация.

Несколько слов об авторе. Он – сын основоположника армянской пейзажной живописи Г.З. Башинджагяна, сам талантливый художник; учился в Тифлисе – центре Кавказа, а затем в Петербурге, где его застала Первая мировая война. Впоследствии он стал крупным лингвистом-востоковедом, ученым секретарем Института языка и мышления АН СССР. А. Краснов-Левитин в своих воспоминаниях «Лихие годы» писал о Башинджагяне как о «блестящем эрудите, делавшем погоду в языкознании» (Париж: ИМКА-Пресс. – 1977. – С. 319). В 1938 году беспартийный профессор пополнил жертвы ГУЛАГа, впоследствии реабилитирован. Сохранилась справка ОГПУ Ленинграда (за три с лишним месяца до убийства Кирова), в которой Башинджагян назван одним из руководителей контрреволюционной группы, вознамерившейся с помощью созданного ею академического «Словаря русского языка» сокрушить «яфетическую теорию Марр Н.Я.».

В январе 1994 года исполнилось 100 лет со дня рождения Леона Башинджагяна.

Профессор Карэн Хачатуров

Ст. Баязет. Понед. 5-го февраля (1918).

«

»

Баязет. Вторн. 18 февр.

«

»

?

Суб. 17 февр.

... (« -) »

Воскр. 18 февр.

15

! ! !

20-го февр. Сафали.

... « » 30 8. 100 ... ?.. !

21 февр.

Четв. 22 февраля. Сафали.

(horribiledictu!)...

21 марта. Игдыр. Комната офицеров у этапного коменданта.

« ...».

Эривань. 24 марта.

« ...» —

« ...».

« ...»

()

Понед. 2 апр. Игдыр.

. 31 1918 .

Вторн.

Четв. 4 апр. Александрополь. Ресторан «Яр».

Понед. 16 апр.

Среда 15 мая.

()

(5-)

Вторн. 21 мая.

Среда 22 мая.

Вторн. 18 июня Н. Ахты.

« » 12

Среда 19 июня. Еленовка.

: « ,

?»

— ?

— ... , .

20 ...

(« »)

Четв. 3 октября.

Четв. 14 ноября.

Ко[а]рчикян,

Воскр. 1-го декабря.

Понед. 26 мая (1919).

Ал. Ив. Хатисовым.

(,),

Дэви и Дро

Хатисов и Генерал Дэви».

(!)

Джафар-Кули Хан –

1)

2)

3)

Среда 28 мая.

подполк. Каракешишев,

- **Г.П. Мелик-Каракозов** (
)

В Игдире (без даты, предположительно 19 августа).

« » 2-
Т. Багдасарян.

Vanik Virabyan, Pages from Levon Bashinjaghyan's Intelligence biography – Levon Bashinjaghyan is one of the most talented intelligence officers of the First Republic of Armenia. Due to hard efforts of Levon Bashinjaghyan and his fellow comrades- in- arms, intelligence and counter-intelligence sections were formed in the main headquarters of the Military Ministry of the Republic of Armenia.

Bashinjaghyan and his friends were doing their best to gain worthwhile information about the location of Turkish-Azerbaijan troops in the boundary of Armenia. Bashinjaghyan carried out some special assignments, as well. He left for Tiflis and other cities on official duties very often, which gave him greater opportunity to get valuable information about the enemy.

Levon Bashinjaghyan was a very talented and reasonable intelligence officer, and his actions were exceptionally directed towards the maintenance of the national-state security of the Republic of Armenia.

From this point, of certain interest is «The Caucasian Diary» of the famous intelligence officer, which enriches the history of Armenian intelligence and gives the full characteristics feature of Levon Bashinjaghyan.

Վանիկ Վիրաբյան – պատմ. գիտ. դոկտոր, Խ. Աբովյանի անվան Հայկական մանկավարժական համալսարանի հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր

